<p>փոփոխումը հասարակական գործառնական նշանակության, որպես գրասենյակ օգտագործելու համար կատարվում է համայնքի ղեկավարի կողմից՝ բնակարանի սեփականատիրոջ դիմում-հայտի հիման վրա:</p>	<p>V</p>					
<p>Շինարարության կամ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերում՝ բազմաբնակարան շենքերում հասարակական գործառնական նշանակությամբ՝ որպես գրասենյակ օգտագործվող տարածքի գործառնական նշանակության փոփոխումը բնակելի գործառնական նշանակության կատարվում է համայնքի ղեկավարի կողմից՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ դիմում-հայտի հիման վրա:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>«Օրենսդրությամբ վերը նշված երկու դեպքերով բնակարանի</p>						

<p>(տարածքի) գործառնական նշանակության փոփոխության մասին դիմում-հայտը մերժվում է, եթե բնակարանի (տարածքի) գործառնական նշանակության փոփոխությունը հակասում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի կամ նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշման N 2 հավելվածով հաստատված N 1 և N2 ձևերին համապատասխան՝ ներկայացված դիմում-հայտի և կից փաստաթղթերի ներկայացման օրվանից համայնքի ղեկավարը 10 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է որոշում գործառնական նշանակության փոփոխման մասին կամ մերժում է այն:</p>	<p>V</p>					

<p>Համայնքի ղեկավարը գործառնական նշանակության փոփոխության մասին որոշումն ուժը կորցրած է ճանաչում, եթե բնակարանի (տարածքի) սեփականատերը չի կատարել ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշման N 2 հավելվածով հաստատված դիմում-հայտերի NN 1 և 2 ձևերին համապատասխան՝ ստանձնած պարտավորությունները կամ բազմաբնակարան շենքի տվյալ մուտքի (որտեղ տեղակայված է գործառնական նշանակությունը փոփոխած բնակարանը (տարածքը) բնակարանների սեփականատերերի կեսից ավելիի կողմից համայնքի ղեկավարին ներկայացվել է համապատասխան համատեղ դիմում:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>Շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոփոխելու հետ</p>						

<p>կապված աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները բավարարող, սահմանված կարգով մշակված, համաձայնեցված ու հաստատված նախագծով:</p>	<p>V</p>					
<p>Հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա համապատասխան համայնքի ղեկավարի կողմից պատվիրատուին սահմանված կարգով տրվում է շենքերի և շինությունների գործառական նշանակությունը փոփոխելու հետ կապված աշխատանքներն իրականացնելու թույլտվություն:</p>	<p>V</p>					
<p>Ոչ բնակելի տարածքները՝ բնակարանների և բնակարանները ոչ բնակելի տարածքների փոփոխելու դեպքում համապատասխան</p>	<p>V</p>					

պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման հիման վրա համապատասխանաբար ընդգրկվում են բնակարանային ֆոնդում կամ հանվում են նշված ֆոնդից:						
--	--	--	--	--	--	--

19. Գործառույթն՝ ՏԻՄ ՀՀ օրենք, 37-րդ հոդված, կետ 13. կազմակերպում է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները
20. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենք և «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն և «Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոխման ու վրահուլարկավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N1301 որոշումներ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N1, կետ 9)	✓					
Հուլարկավորությունների հետ կապված						

<p>մատուցվող վճարովի և անվճար ծառայությունների ցանկի հաստատումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N1, կետ 12,13</i>)</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>ՀՀ-ում հուղարկավորելու մասին անվճար տեղեկանքի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N1, կետ 22</i>)</p>	<p>V</p>					
<p>Նոր և գործող գերեզմանատների ընդլայնման համար հողատարածքների տրամադրումը՝ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N 41, կետ 9) հավելված N4, կետ 6,8</i>)</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի</p>						

մշակումը և հաստատումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N4, կետ 10</i>)	✓					
Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N4, կետ 11,12</i>)	✓					
Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N4, կետ 15,16</i>)	✓					
Գերեզմանատների սանիտարական գոտու (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N4, կետ 10</i>)	✓					
Վճարովի						

հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքների սահմանումը գոտու (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N7, կետ 8</i>	Գործառույթ չի իրականացվել					
Վերահուղարկավորումների գործընթացի կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում <i>հավելված N2</i>	Գործառույթ չի իրականացվել					

21. Գործառույթը՝ ՏԻՄ ՀՀ օրենք, 37-րդ հոդված, կետ 15. կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանումը, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից:
22. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենք և ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1161-Ն որոշում:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
Բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի պահպանման ընդհանուր վերահսկողության իրականացում («Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված, կետ 7)	Գործառույթ չի իրականացվել					

<p>Բազմաբնակարան շենքի կառավարման գործընթացին աջակցություն («Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված, կետ 2)</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>Համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային կառավարման մարմինների գրանցամատյանի վարումը («Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված, կետ 9)</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>Բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերի սահմանումը (ՏԻՄ օրենք, 38-րդ հոդված, կետ 16):</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՒԽԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

«05» վետրվարի 2014թ. N 9-Ն

«23» դեկտեմբերի 2013թ. N 429-Ն

ՀՈՂՈՎԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐՉՊԵՏՆԵՐԻ ԿՈՄԻՑ ԻՐԱԿԱՄԱՑԿՈՂ ԿԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏՍԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՐ-728 հրամանագրի 1.37 կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ.

1. Հաստատել հողօգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության մարզապետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՒԽԱՐՉԱՊԵՏ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱՐԱՐ

_____ Ա. ԳԵԿՈՐԳՅԱՆ

_____ Ե. ՉԱԽԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ՀՀ փոխվարչապետի, տարածքային կառավարման նախարարի

2014 թվականի փետրվարի 5-ի N9-Ն

և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի

2013 թվականի դեկտեմբերի 23-ի N429 -Ն

համապետել հրամանով

Վարչական Հսկողության Հարցաշար

Հողօգտագործման բնագավառում

1. Գործառույթը. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ղեկավարը՝

- 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.
- 2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանաձ պայմաններով, սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը.
- 3) օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.
- 4) օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:
- 5) սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.
- 6) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերը.
- 7) սահմանված կարգով ապահովում է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանությունը:

2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝

Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգիրք», «Հողերի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենք, «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշում ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշում, ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշում, «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1134 որոշում:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերջման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
<p>1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանաձ պայմաններով</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>2. Համայնքի ավագանին ընդունում է համայնքի վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի <u>օտարման, անհատույց (մշտական) օգտագործման և կառուցապատման</u> իրավունքով տրամադրմանը համաձայնություն տալու վերաբերյալ որոշում՝ նշելով հողամասի (հողամասերի) գտնվելու վայրը, չափերը, օգտագործման սահմանափակումները, պայմանները:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					

<p>3. Համայնքի ղեկավարը պատրաստում է հողաշինարարական գործ, որում ներառվում են համայնքի ավագանու որոշումը, տեղանքի կադաստրային քարտեզը, որտեղ նշվում են օտարման, անհատույց (մշտական) օգտագործման և կառուցապատման իրավունքով տրամադրման ենթակա հողամասերը, դրանց շրջադարձային կետերի կորդինատներն ու չափերը, հողամասի օգտագործման սահմանափակումների մասին տեղեկանքը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներում ընդգրկված լինելու վերաբերյալ տեղեկանքը, և ներկայացնում մարզպետին:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>4. Դրական եզրակացության առկայության դեպքում՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխության անհրաժեշտության բացակայության դեպքում համայնքի ղեկավարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված կարգով իրականացնում է հողամասերի օտարումը, անհատույց (մշտական) օգտագործման կամ կառուցապատման իրավունքով տրամադրումը:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>5. Հողամասերն օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով՝ սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու, ուղղակի վաճառքի միջոցով, աճուրդով, փոխանակության միջոցով:</p>	<p>V</p>					

<p>6 Հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված դեպքերում ու կարգով և օրենքով նախատեսված այլ դեպքերում:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>				
<p>7. Քաղաքացիներից դիմումներն ընդունվում են հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին տեղեկատվության հրապարակման օրվանից մեկ ամսվա ընթացքում, որից հետո հինգ օրում ամփոփվում են ընդունված դիմումները:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>				
<p>8. Դիմումների ամփոփման արդյունքների հիման վրա և մեկ հողաբաժնի համար ընդունված չափով ճշտվում են պահանջվող հողամասերն ըստ նպատակային ու գործառնական նշանակության՝</p> <ol style="list-style-type: none"> 1) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու, 2) որպես տնամերձ հողամաս օգտագործելու կամ անհատական բնակելի տան կառուցման ու սպասարկման համար: 	<p>Գործառույթ չի իրականացվել</p>				
<p>9. Հողամասերն անհատույց տրամադրվում են՝ համայնքի վարչական սահմաններում՝ համայնքի ղեկավարի կողմից (համայնքի ավագանու համաձայնությամբ):</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>				
<p>10. Հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և 	<p>Գործառույթ չի իրականացվել</p>				

<p>համապատասխան գծային ենթակառուցվածքների, ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար հողամասերի տրամադրման դեպքում.</p> <p>2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ բնակելի շենքերը, շինությունները բնակելիի վերափոխելու արդյունքում ձևավորված բնակելի տների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն օտարելիս.</p> <p>3) գոյություն ունեցող բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ նշանակության օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:</p>						
<p>11. Հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված հողամասերի, որոնք օտարվում են հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>12. Հողամասերն <u>աճուրդային</u> կարգով օտարվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, հրապարակային սակարկությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, դասական աճուրդով:</p>	<p>V</p>					

<p>13. Հողամասերի աճուրդի կազմակերպման փաթեթում ներառվում են օրենքով և սույն կարգով սահմանված՝</p> <p>անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը՝</p> <p>1) օտարման պայմանագրի նախագիծը.</p> <p>2) օտարվող հողամասի հատակագծի նախագիծը.</p> <p>3) քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված քաղաքաշինական, բնապահպանական և այլ բնույթի պահանջների և սահմանափակումների, ելակետային տվյալների ու տեխնիկական պայմանների ամրագրմամբ, այդ թվում՝ հողամասի նկարագրությունը (կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը), շինարարության սկզբի և ավարտի ժամկետները:</p>	<p>V</p>					
<p>14. Աճուրդի արդյունքների ամփոփումից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 12-օրյա ժամկետում աճուրդի կազմակերպիչը հաղթողին տրամադրում է հողամաս տրամադրելու վերաբերյալ լիազոր մարմնի որոշումը, օտարման պայմանագիրը, օտարված հողամասի հատակագիծը, իսկ քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար նաև՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը:</p>	<p>V</p>					

<p>15. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի դեպքում մեկ լոտով օտարվող հողամասի առավելագույն չափը չի կարող 20 հեկտարից ավելի լինել, իսկ նվազագույն չափը չի կարող պակաս լինել տվյալ համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից, եթե համայնքի հողերի օգտագործման սխեմայով այլ չափ նախատեսված չէ:</p>	<p>✓</p>					
<p>16. Աճուրդը կազմակերպում է համայնքի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված՝ աշխատակազմի պաշտոնատար անձր:</p>	<p>✓</p>					
<p>17. Աճուրդի անցկացման ձևի մասին նշվում է աճուրդի իրականացման մասին ծանուցման մեջ:</p>	<p>✓</p>					
<p>18. Աճուրդին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝ 1) հայտ՝ նշելով հողամասի ձեռքբերման նպատակը. 2) աճուրդին մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր. 3) անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:</p>	<p>✓</p>					
<p>19. Եթե աճուրդը չի կայանում մեկ հայտ ներկայացնելու պատճառով, ապա հողամասն ուղղակի վաճառքի միջոցով կարող է օտարվել առաջին հերթին աճուրդի մասնակցության հայտ ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ տվյալ համայնքի բնակիչներին՝ աճուրդի արդյունքների ամփոփումից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված 10-օրյա ժամկետում:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					

<p>20. Հողամասերը <u>փոխանակվում</u> են քաղաքացիների կամ իրավաբանական անձանց դիմումների հիման վրա կամ համայնքի ղեկավարի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>21. Պետական սեփականություն հանդիսացող հողամասերը փոխանակվում են Հայաստանի Հանրապետության մարզպետների (Երևանում՝ Երևանի քաղաքպետի) կողմից, եթե չի փոխվում հողամասի նպատակային նշանակությունը:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>22. Հողամասերի փոխանակության մասին որոշման ընդունումից հետո կողմերի միջև կնքվում է հողամասերի փոխանակության մասին պայմանագիր, որին կցվում են փոխանակվող հողամասերի սահմանված կարգով կազմված հատակագծերը:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>23. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածին համապատասխան՝ հողամասերն <u>անհատույց (մշտական) օգտագործման</u> իրավունքով տրամադրվում են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) պետական և համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին. 2) բարեգործական, հասարակական միավորումներին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար. 3) օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում: 	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>24. Հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է առանց մրցույթի:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					

<p>25. Հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու համար կազմվող հողաշինարարական գործում լրացուցիչ ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝</p> <p>1) անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հողամաս ձեռք բերելու մասին լիազորված մարմնի որոշումը.</p> <p>2) քաղաքաշինական գործունեություն իրականացնելու դեպքում ֆինանսական միջոցներով ապահովված լինելու մասին տեղեկանք՝ տրված համապատասխան բանկի կողմից.</p> <p>3) պահանջվող հողամասն այլ հողօգտագործողի տիրապետման տակ գտնվելու և նրա կողմից օգտագործվելու դեպքում՝ նաև հողօգտագործողի գրավոր համաձայնությունը, որը ենթակա է նոտարական վավերացման (եթե հողօգտագործողը քաղաքացի է):</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>26. Ներկայացված փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից մեկամսյա ժամկետում ընդունվում է որոշում և, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 686-րդ հոդվածին համապատասխան, կնքվում հողամասն անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>27. Հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերից:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					

<p>28. Հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարվանից ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի:</p>	<p>✓</p>					
<p>29. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հողամասերը վարձակալության տրամադրվում են մրցույթով</p>	<p>✓</p>					
<p>30. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է հետևյալ նպատակներով՝</p> <ol style="list-style-type: none"> 1) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու, 2) ընդհանուր օգտագործման տարածքները (գրոսայգիներ, պուրակներ, ավտոկայանատեղեր)՝ դրանց նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու, 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում կամ դրանց գործողության ժամկետներն ավարտվելուց հետո վարձատուի կողմից պայմանագրերի ժամկետները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետներով երկարացվելու դեպքում: 	<p>✓</p>					

<p>31. Վարձակալության իրավունքով տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա կարող են կառուցվել միայն գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր և շինություններ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերին համապատասխան:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>32. Հողամասերի կառուցապատման իրավունքը տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան՝ մրցութային կարգով՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝</p> <p>1) մինչև 20 քառ. մետր մակերեսով ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար.</p> <p>2) տրամադրված հողամասերի ընդլայնման անհրաժեշտության դեպքում, եթե լրացուցիչ տրամադրվող հողամասը հնարավոր չէ որպես առանձին միավոր տրամադրել մրցութային կարգով.</p> <p>3) բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.</p> <p>4) էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և համապատասխան գծային ենթակառուցվածքների, ինչպես նաև ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ)</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					

<p>կառուցման համար.</p> <p>5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասի մի մասն այլ հողօգտագործողի տրամադրելու դեպքում՝ նախկին հողօգտագործողի իրավունքները սահմանված կարգով դադարեցվելուց հետո.</p> <p>6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց կամ քաղաքացիներին օգտագործման իրավունքով տրամադրված հողամասերը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակման անհրաժեշտություն առաջանալիս.</p> <p>7) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների, Երևանի քաղաքապետի ներկայացմամբ:</p>						
<p>33. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար համայնքների ղեկավարների կողմից ստեղծվում են մրցութային հանձնաժողովներ:</p>	<p>V</p>					
<p>34. Մրցութային հանձնաժողովներն ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ:</p>	<p>V</p>					

<p>35. Մրցութային հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ:</p> <p>Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի անդամների, մրցություն հաղթողի, ցանկության դեպքում՝ նաև մրցութի մասնակիցների կողմից:</p> <p>Մրցութի հաղթողին որոշելիս՝ առաջացած հարցերը նշվում են արձանագրության մեջ՝ որպես հատուկ կարծիք: Արձանագրության մեջ նշվում են մրցութի հաղթողի տվյալները, հողամասի վարձակալության ժամկետները, հողամասի և վարձավճարի (վճարի) չափերը, հողամասի օգտագործման նպատակային և գործառնական նշանակությունը, հողամասի օգտագործման պայմանները, մրցութի հաղթողին տրվող իրավունքները, ինչպես նաև մրցություն սահմանված մյուս պայմանները:</p>	<p>V</p>					
<p>36. Մրցություն հաղթած անձն արձանագրությունը և (կամ) հողամասի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի պայմանագիրն ստորագրելուց հրաժարվելու դեպքում զրկվում է մրցութը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցութի վարձակալելու (կառուցապատման իրավունք ձեռք բերելու) իրավունքից:</p> <p>Եթե կրկնամրցութը չի կայանում մեկ հայտ ներկայացված լինելու պատճառով, ապա հողամասը կարող է առանց մրցութի 10-օրյա ժամկետում տրամադրվել առաջին հերթին հայտը ներկայացնողին, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ հողամասը կարող է տրամադրվել նոր մրցութ հայտարարելով:</p>	<p>V</p>					

<p>37. Հողամասերը մրցույթներով տրամադրելու համար վարձավճարի (վճարի) մեկնարկային չափը սահմանվում է համայնքի ղեկավարի կողմից, որը չպետք է պակաս լինի տվյալ հողամասի համար սահմանված հողի հարկի տարեկան դրույքաչափից:</p>	Վ				
<p>38. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը</p>	Գործառույթ չի իրականացվել				
<p>39. Հողային հաշվեկշիռը հողերի ընթացիկ հաշվառման հիման վրա կազմվող յուրաքանչյուր տարվա հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությունն է:</p>	Վ				
<p>40. Հողային հաշվեկշիռը բաղկացած է տեքստից և աղյուսակներից: Հողային հաշվեկշռում արտացոլվում է հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ:</p>	Վ				
<p>41. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված հետևյալ փոփոխությունները՝</p> <ol style="list-style-type: none"> 1) հողի սեփականության ձևի, 2) հողի օգտագործման ձևի, 3) հողի նպատակային նշանակության, 4) հողատեսքերի և դրանց գործառնական նշանակության, 	Վ				

<p>5) հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման և քանդման,</p> <p>6) ոռոգելի, անջրդի, անօգտագործելի և չորացված հողերի վիճակի, պետական սեփականություն հանդիսացող հողերի շարժի և փոխակերպման (տրանսֆորմացիա),</p> <p>7) նոր անտառատնկումների և անտառահատումների,</p> <p>8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման և վարձակալության իրավունքով տրամադրման տվյալների:</p>					
<p>42. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշիռը կազմում է հողերի պետական հաշվառման տվյալ տարվա ընթացիկ տվյալների հիման վրա՝ հուլիսի 1-ի դրությամբ:</p>	V				
<p>43. Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման (Երևանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հետ</p>	V				
<p>44. Ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում համապատասխան մարզպետին (բացառությամբ Երևանի քաղաքապետի):</p>	V				
<p>45. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները</p>	V				

<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները:</p>					
<p>46. Համայնքի վարչական սահմաններում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանություն:</p>		V			
<p>47. Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանության ենթակա են՝</p> <p>1) պետական գեոդեզիական ցանցի կետերը՝</p> <p>ա) պետական (ազգային) պլանային գեոդեզիական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, արտաքին նշանները, կողմնորոշիչ կետերը.</p> <p>բ) պետական (ազգային) բարձունքային գեոդեզիական ցանցի կետերը, հիմնային, գրունտային, ժայռային, պատային հենանշանները (ռեպերները) և մակնիշները.</p> <p>2) գրավիմետրիական ցանցի կետերը, դրանց կենտրոնները, ուղեկից կետերը և ստուգողական հենանշանները.</p> <p>3) հատուկ գեոդեզիական ցանցերի կետերը՝ դրանց արտաքին նշանները, կենտրոնները, ստուգողական մակնիշները:</p>		V			
<p>48. Հողամասերը, որոնց վրա տեղակայված են գեոդեզիական կետերը, համարվում են գեոդեզիական կետերի պահպանման և սպասարկման գոտիներ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ կետին և 50-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ ենթակա են գրանցման որպես սերվիտուտ:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>				

<p>49. Շենքերի պատերին, շինությունների վրա և նման տեղերում տեղադրված գեոդեզիական կետերի համար սահմաններ չեն որոշվում: Այդ դեպքում պահպանման ենթակա է անմիջապես կետը, պատային նշանը կամ հենանշանը (ռեպերը):</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>50. Համաձայն «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ գեոդեզիական կետերի պահպանության ապահովումը համայնքի վարչական սահմաններում իրականացնում է համայնքի ղեկավարը:</p>		<p>V</p>				
<p>51. Պահպանության են հանձնվում բոլոր նոր տեղադրված և նախկինում պահպանության չհանձնված տեղագրագեոդեզիական աշխատանքների կատարման ժամանակ հետազոտված ու վերականգնված գեոդեզիական կետերը:</p>	<p>V</p>					
<p>52. Գեոդեզիական կետերի պահպանության հանձնումը ձևակերպվում է սահմանված ակտով (ձև N 2): Ակտը կազմվում է 2 օրինակից՝ գեոդեզիական կետերը պահպանության հանձնվող կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով, եթե կազմակերպությունը կնիք ունի: Ակտին կցվում է գեոդեզիական կետերի ցանկը՝ տեղադիրքի նկարագրությամբ:</p>	<p>V</p>					
<p>53. Գեոդեզիական կետերը պահպանության հանձնելու մասին ակտի առաջին օրինակը մնում է աշխատանքը կատարած կազմակերպությունում հետագայում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հանձնելու համար, իսկ երկրորդը՝ համայնքի ղեկավարի մոտ:</p>	<p>V</p>					

<p>54. Մի հողօգտագործողից մյուսին հողամասերի նկատմամբ իրավունքի փոխանցման դեպքում նախկինում պահպանության ընդունված գեոդեզիական կետերը հանձնման ակտով փոխանցվում են նոր հողօգտագործողին: Հանձնող կողմը կետերի հանձնման ակտի մի օրինակն ուղարկում է կադաստրի պետական կոմիտե:</p>	<p>Չի իրականացվել</p>					
<p>55. Գեոդեզիական կետերի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացվում է կադաստրի պետական կոմիտեի կողմից:</p>	<p>Գործառույթ չի իրականացվել</p>					
<p>56. Պետական գեոդեզիական ցանցի կետերը քանդվում կամ տեղափոխվում են միայն կադաստրի պետական կոմիտեի համաձայնության դեպքում:</p>	<p>Չի իրականացվել</p>					
<p>57. Գեոդեզիական կետերի (կենտրոնների, արտաքին նշանների, ռեպերների, կողմնորոշիչ կետերի) ոչնչացում կամ վնասում հայտնաբերվելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից կազմվում է ակտ, որտեղ նշվում են վնասվածության բնույթը, ինչպես նաև վնասման կամ ոչնչացման պատճառները:</p>	<p>Չի իրականացվել</p>					
<p>58. Գեոդեզիական կետերի ոչնչացման կամ վնասվածության մասին ակտը կազմվում է 2 օրինակից: Առաջին օրինակն ուղարկվում է կադաստրի պետական կոմիտե, երկրորդը մնում է համայնքում:</p>	<p>Չի իրականացվել</p>					
<p>59. Գեոդեզիական կետերի միտումնավոր ոչնչացման կամ վնասման դեպքում ակտի պատճենը փոխանցվում է իրավապահ մարմիններին՝ մեղավոր անձանց Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:</p>	<p>Չի իրականացվել</p>					